


ԿԱՄԱԿՈՐ

Posted on December 10, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



ՌՈՒՔԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, ՍԵՆ ՌԱՖԱՅԵԼ, 26-11-21

«Իշխանությունը առանց խիստ կանոնների եւ օրենսդրության, ոչ թե ազատությունների, այլ ինքնիշխանության՝ անարխիայի երկիր է»:
Միշել Օնֆրեյ

Կարիք կա՞յ յիշեցնելու, որ հայկական հարցը անընդմեջ տարբեր տիրությունների ու միջազգային ատեանների ծամօնն է եղած դարերի ընթացքին եւ վերջապես երբ ԱՄՆ Նախագահ Վիլսոնը հարիւր տարի առաջ ողջամիտ լուծման նմանուող յայտարարութիւն արեց, շատերը այն ընդունեցին որպէս իրաւական իրականութիւն, բայց աւա՛ղ այն խամրեց արագ, անհասանելի պայմաններում եւ մինչ այսօր դեռ բազում են, լուրջ քաղաքագետ համարուողների շրջանակներում, այդ դիպուածի վերակենդանացմանը հաւատացողները:

Քաղաքական մթնոլորտը, որը տիրում է ներկայիս մեր սիրելի երկրում, ոչ միայն անբաւարար է, շարունակաբար սխալ գործելու՝ իմա պետական յանցագործութիւնների պատճառով, երբ եղած կորուստները վերականգնելու եւ տուժուածներին ամոքելու փոխարէն՝ կասկածելի քայլեր են արւում մնացածը կորցնելու վտանգով: Եթէ մօտ երկու տարի քաջքշուող Նախընտրուած թաւշեայ գործօնը կարելի է խամաճիկային եւ ոչ տեղին գնահատել, որ փորձ է արւում պողպատի վերածել, ապա եղած ընդդիմադիր ուժերի գործունեութեանը յարմար բառ չեմ գտնում ասելու, քանզի իմ իմացականութեամբ այն, կործանարար լինելով, որեւէ տրամաբանութեան կամ բանականութեան չի համապատասխանում:

Կարծում եմ, թէ ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այդ խմբերը ստեղծող եւ հովանաւոր Քոչըրդ ղաշինք կազմելով ընտրական ոլորտ մտաւ յուսալով, որ պիտի կարողանայ յաղթական լինել ու տիրանալ իշխանութեան, որի ծածուկ, բայց հիմնական Նպատակն էր՝ չեղարկել իր հանդէպ եղած քրեական գործերը, իսկ հաւատարիմ դաշնակիցները բացուող պնակից օգտուել, եթէ այն բնագանցութիւն (métaphysique) չէ, բաց քամին այլ ուղղութեամբ փչեց եւ միասին յայտնուեցին ընդդիմադիր դաշտում, ուր փորձում են իշխանութեան հիմքերը արմատից կրծել, - քոչի իսկ արտայայտութեամբ, - իսկ երկրի առաջ ծառացած տարբեր մարտահրաւերներին մասնակից լինելու խօսք անգամ լինել չի կարող եւ այդ ուղղութեամբ որեւէ քայլ անելու տրամադիր անգամ չեն նոր կազմած դաշինքով հանդերձ, փոխարէնը դատարկ քննադատութիւնները հեղեղում են, ուր փոխադարձ յարաբերութիւնների ընթացքին բացակայ է տարրական կիրթ վերաբերմունքը: Վիճակը անհատական չէ, այլ մեր հասարակութեան մի մասը պարկեշտութեան եւ բանականութեան լուրջ խնդիր ունի, որ շաղախուած է անհասկանալի ատելութեամբ:

Ինչ՞ի նման էր խորհրդարանի երրորդ փոխնախագահի ընտրութիւնը, որ անցաւ երեք փուլով եւ ընտրեալը՝ Իշխան Սաղաթելեան, որ ասելիք չունի, բերանը բացում է միայն

լուտանքներ թափելու պետության հասցեին, եթե արժող լքած չի լինում իր խմբի անդամների հետ: Ասելիք կա՞յ անվտանգության յանձնաժողովի փոխնախագահի 13 անգամ Ղազինեանի թեկնածու առաջադրուելը եւ չընտրուելը եւ կամակոր ձեւով միեւնոյն անձի կրկին թեկնածու ներկայանալը՝ սպառնալով, որ այս անգամ ընդդիմութիւնը քրեական գործ պիտի յարուցի գործարքը պետական դաւաճանութիւն համարելով:

Այս եւ նման աճապարարութիւնները աշխատանքը խափանելու համար են արւում եւ այդքանը անբաւարար համարելով նիստերի դահլիճը տեղափոխում են Ազատութեան հրապարակ՝ բացօթեայ ցոյցերի, ուր ելոյթ է ունենում ինքը Քոչը, մինչդեռ ընդդիմութեան ուղղակի պարտականութիւնը պիտի լինէր ցանկացած խնդրոյ համար այլընտրանք առաջարկել առողջ եւ առարկայական քննարկումների միջոցով խորհրդարանի ամբիոնից, որ յարիր է մեր հազարամեայ մշակոյթին:

Ի դեպ, անկարելի է մոռացութեան մատնել մի բան. երբ կալանքի տակ էր Քոչարեանը, Նրա մօտ մի քանի հիւանդութիւն յայտնաբերեցին անաչառ բժիշկները, մինչեւ իսկ կեանքի համար վտանգաւոր, որի պատճառով դատապաշտպան խմբի պահանջով եւ գրաւի դիմաց՝ խափանման միջոցը չեղեալ համարուեց, մինչդեռ այսօր նա ենթադրաբար հիւանդութեան որեւէ բողոք չունի՝ պատրաստ է եւ ոչինչ չի խնայում, որ հանգամանքների բերումով դարձեալ իշխանութեան տիրանայ: Այդ եւ այլ ընտրական խախտումների պատճառով՝ պատգամաւոր բժիշկ-պրոֆեսոր Չարչեանը բանտախցում գտնուեց, որ ըստ էութեան իր անդամագրուելը ինչ որ արկածախնդիր դաշինքի, իր իսկ ընտրութիւնն է եղել եւ պարտաւոր էր զգոյշ եւ հեռատես լինել հետեւանքները կանխատեսելով, մանաւանդ իր մակարդակի բերումով: Տարբերութիւնը այդ է խելամիտի եւ միւսների միջեւ:

Իմ հայեցողութեամբ՝ մի հարց կայ, որ շատերին է անհանգստացնում, այն է թէ, ինչո՞ւ մեր բազմաթիւ խմբերը, որ հազուադէպ են համաձայնութեան յանգում որեւէ հարցի շուրջ, ինչ որ ուժերի ներքոյ համախմբւում են հայակործան արարքի պարագային, որի ապացոյցն է վերջին ընտրութիւններին երկու դաշինքների մուտքը խորհրդարան մօտ երեսուն տոկոս քուէ հաւաքելով, որ ըստ իս հասարակութեան ոչ առողջ լինելու փաստ է: Ուրեմն երկու տասնամեակ տեւող յանցագործ կեցուածքը սուտ է, կամ նուազագոյնը՝ մոռացուած, ուստի ընտրուած իշխանութեան հրաժարականի պահանջը օրինական է, որովհետեւ ենթադրաբար այն կատարեալ չէ:

Իսկ «Ո՞վ է, որ կեցցէ եւ ոչ մեղիցէ», որ կրկնում էր լուսահոգի մայրս իր աղօթքների ընթացքին:

Այս յօդուածը գրելու ընթացքին էր, որ յայտնի եղաւ երեք երկրների եռակողմ հանդիպման լուրը Սոչի քաղաքում եւ դարձեալ մեր փորձառու ընդդիմադիրները նախօրէին ցոյց կազմակերպելով Ազատութեան հրապարակում, խստօրէն պահանջում

էին, թէ ինչո՞ւ վարչապետը նախօրօք չի հրատարակում, թէ ի՞նչ նիւթերի շուրջ պիտի ընթանան բանակցութիւնները, միեւնոյն ժամանակ նոյն եռանդով կոչ անում որ հասարակութեանը յայտնի լինի նոր ձեռք բերուած զինամթերքի տեսակները եւ քանակը, քանզի իրենք անհանգիստ են երկրի անվտանգութեան վիճակով: Որքան որ այդ ազնուագոյն անհանգստութիւնը գովելի եւ հասկանալի է, նրանց հրատարակումը հեռու է ընդունելի եւ խելամիտ լինելուց. պետական գաղտնիքի դեպքում:

Մարգարեութիւն անելու մտքից հեռու լինելով հանդերձ՝ ցանկանում եմ հաւատալ, որ այս եռակողմ հանդիպումը, որին պիտի հետեւի Բրիւսելում կայանալիք նոյնանման բանակցութիւն մեր երդուեալ թշնամու հետ, թերեւս որոշ դրական փոփոխութեան հասնենք մեր սահմաններին տիրող արդի անցանկալի կացութեան դիմաց:

* Միշել Օնֆրեյ.- ժամանակակից Ֆրանսայում փայլուն քաղաքագետ վերլուծաբան է, որ 44 օրեայ դժոխքի օրերին այցելեց Արցախ՝ տեղի վրայ ծանօթանալու իրադրութեանը, բայց պսակածեւ ժահրով վարակուելով ետ դարձաւ, առաքելութիւնը կիսատ թողնելով:

** Կարիք կա՞յ յիշեցնելու խորհրդարանի ամբիոնից հնչող ընդդիմադիր պատգամաւորների անկիրթ եւ անտեղի հարցադրումները, մինչդեռ այդ կարելի է անել բարեկիրթ եւ յարգալից ձեւով՝ զանց առնելով ծեծկռտուքը:

*** Այդ հարցում եւս աճպարարութեան մի այլ տեսակի վկայ եղանք՝ երբ պահանջուած գումարը վճարելու համար Քոչը դիմեց Մոսկուացի իր մանկլաւիկ ընկերներին հանգանակի ձեւով մասնակից լինել, որ ըստ երեւոյթին թաքնուած գործարք էր: Այդ

There are no comments yet.